

ՋԱՎԱԽԵԹՅԱՆ ԷՏՅՈՒՂՆԵՐ

ԱՐՄԱՆԻ ԵՎ ՀՐԱԳՅԱՅԻ ԱՌԱԶԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՃՈՒՅԱՀԱՆՂԵՍԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Այս քնարերգուների լեռնաշխարհը աշխարհին տվել է հանճարեղ մարդկանց, որին թվարկես, Վահան Տերյանին, գրող Դերենիկ Դեմիրճյանին, աշուղ Ջիվանուն, նկարիչ Վարդգես Սուրենյանցին, փկտոր Դավենկյանին, Վահրամ Գայֆեջյանին... Ակասած Ախալցխեցից, Ախալքալաքից ու Նինոծմինդայից, գեղարվեստի այս մշակների ներշնչանքի աղբյուրը իրենց չքնաղ ծննդավայրն է եղել:

Ուստի, զարմանալի չէր, որ հայաստանցի երկու երիտասարդ նկարիչ Արման Թորոսյանը եւ Գրայա Սաֆարյանը, որոնք ավարտել են Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի կերպարվեստի բաժինը, զնայվել են Ջավախքի բնությանը: ...Նկարակալներն ուսերին դրած, երկու շաբաթվա ընթացքում, նրանք շրջել են նրա գեղատեսիլ գյուղերը, զգացել խիստ բնութային, հիացել նրա կարծր ժայռերով եւ, ոգեորված բնաշխարհի գեղեցկությամբ, տեսածն ու զգացածը նկարել են:

Բնության ծոցում նկարելն ունի իր դժվարությունները: Կիզիչ արեւի ճառագայթները, անձրեւն ու ուժեղ քամին, որը կարող է պոկել նկարը նկարակալից, ստիպում են նկարչին արագ աշխատել: Եվ այս հանգամանքը պահանջում է հեղինակից՝ հոգում նախորդ ունենալ նկարի վերջնական գաղափարը: Այդ ձեւի նկարները էտյուդներ են կոչվում:

Եվ, խնդրեմ... քսան էտյուդ՝ կատարված թափանցիկ գույներով, դասական գեղարվեստական դարոցին եւ ինչու չէ, նաեւ մեր ազգին բնորոշող արհեստավարժությամբ:

Տղաների աշխատանքներն ինձ հիշեցրին անգլիական ջրաներկը:

Մինչ թբիլիսիում բացվելը, Արման եւ Գրայայի այս առաջին միասնական անձնական ցուցահանդեսը բացվել էր Ախալքալաքի թանգարանում, հետո այն ցուցադրվել էր Նինոծմինդայի նորակառույց «Ռա-

ֆայել Ջավախք» կրթա-մշակութային կենտրոնում:

Ցուցահանդեսը բացվել էր մայրաքաղաքի «Հայարտուն» կրթա-մշակութային կենտրոնում: Այն բացել էր կենտրոնի տնօրեն Լեւոն Չիղիլյանը: Ապա Վրաստանի հայ նկարիչների միության նախագահ Սերուժան Շահունյանը հավաքվածներին ներկայացրել էր Արման Թորոսյանի եւ Գրայա Սաֆարյանի ստեղծագործությունները: Երախտագիտության եւ շնորհակալական խոսքով ներկայացան նկարիչներ Ջիվանի Վեփվածեն, Լեւոն Օսիպովը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, երեւանցի, արվեստագիտության դոկտոր, Հայաստանից ժամանած Կարեն Մաթեոսյանը: Բանաստեղծներ Մարինա Մովսեսովա-Կիրակոսյանը եւ Գարրի Ղալամբարովը, ոգեորված երիտասարդ նկարիչների նկարներով, նրանց շնորհավորեցին իրենց ստեղծագործությունների ընթերցմամբ: Ցուցահանդեսը եզրափակվեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի ջերմ մաղթանքներով եւ օրհնությամբ:

Նշենք նաեւ, որ հունիսի 19-ին «Հայարտուն» այցելեց՝ աշխատանքային այցով Վրաստանում գտնվող ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը՝ իր պատվիրակության կազմով եւ դիտեց Արմանի ու Գրայայի աշխատանքները:

ՍԵՐՈՒԺԱՆ ՇԱՂՈՒՄՅԱՆ
Մանրանկարիչ

ԿՐԹՕՋԱԽ

«ՍՈՒՐԲ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ» ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԱՆՂԵՍԸ

Սույն թվականի հունիսի 21-ին, Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում, տեղի ունեցավ «Սուրբ Մովսես Խորենացի» նախակրթարանի 2013-2014 ուսումնական տարվա շրջանավարտների՝ 16 տղաների ու աղջիկների ավարտական հանդեսը:

Ու տարածվեց փոքրիկների գեղեցիկ եւ ճիշտ հայերենով ասված խոսքը, սահուն արտասանությունը, երգն ու պարը, արժանանալով ներկաների հիացմունքին: Երեխաները ցուցադրեցին հայոց եկեղեցու, ազգի ու հայրենիքի նկատմամբ մեծ սիրով տոգորված այն ամենը, ինչը նախակրթարան հաճախելու տարիներին նրանց սովորեցրել էին ուսուցիչներ Լալա Գեւորգյանը, Նարինե Դուռչյանը,

Գեւորգ սարկավազ Անտոնյանը եւ ուրիշներ:

Նախակրթարանի դաստիարակներին եւ Վիրահայոց թեմի ղեկավարությանը ծնողների անունից շնորհակալության խոսքեր ուղղեց Անժելա Խաչատրյանը: Շնորհավորանքի խոսքով հանդես եկան «Հայարտուն» կենտրոնի բարերար, Նովոսիբիբիսկից ժամանած Բորիս Սաակովը, Վիրահայոց թեմի մշակույթի բաժնի վարիչ Լեւոն

Չիղիլյանը: Վերջինս «Սուրբ Մովսես Խորենացի» նախակրթարանի պատասխանատու Եվգենյա Մարկոսյանին եւ «Սուրբ Գրիգոր Նարեկացի» շաբաթօրյա դպրոցի ուսուցչուհի Թամարա Գաբրյանին հանձնեց ՀՀ Սփյուռքի նախարարության պատվոգրերը: Հավարտ միջոցառման օրհնության եւ գնահատանքի խոսք ասաց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: Այնուհետեւ Սուրբ Էջմիածին եկեղեցուն, Վիրահայոց թեմի առաջնորդի նախագահությամբ, կատարվեց նախակրթարանի չմկրտված երեխաների մկրտության կարգ:

«ՀՐԱԾԵՆՑ ՍԱՆԵՐԻՍ»

Այսպես էր վերնագրել իր կազմակերպած գերեկույթը Թբիլիսիի թիվ 104 դպրոցի տարրական դասարանների վաստակաշատ ուսուցչուհի Էմմա Արղուլյանը: Մանկավարժն էր իր սրտի խոսքն ասում սաներին, եւ դա իր խորհուրդն ուներ...



Բազմամյա ու բազմափորձ ուսուցչուհու այս հրաժեշտը չորրորդ դասարանցիների, այսինքն՝ կրթօջախի սանդղակի առաջին աստիճանը փակող օղակի հետ, նրա մանկավարժական կենսագրության տասներորդ հրաժեշտն էր: Քառասուն տարիներ էին զլորվել, եւ դրանց հետ կապված վերապրվող հուշերը ամփոփում էին՝ այսօր իրենց կյանքի ուղին ազնվորեն հարթած բազում նման մանուկների դեմքեր... Ահա ինչու էր հուզված Էմմա Արղուլյան ուսուցչուհին: Եկել էր, մեծ խորհուրդ ամփոփող, հետադարձ հայացքի պահը, եւ դա ուսուցչուհուն բերեց անկեղծ խոստովանության. «Եթե չես կարող ազնվացնել սանիդ սիրտը, զուր ես ստանձնել ուսուցչի պարտականությունը»: Այս

հավատամքով է, ահա, 45 տարուց ավելի, դասարան մտնում Էմմա Արղուլյանը եւ այդ գիտակցումը նրան օգնում է պատասխանատու աշխատանքը երջանկության աղբյուր դարձնել:

Բեմից սիրելի ուսուցչուհուն իրենց երախտիքը հայտնեցին նրա սաները: Չորս տարի առաջ՝ նրանք երկյուղով բացեցին այս կրթօջախի դռները, իսկ այժմ համարձակ են եւ շնորհակալ, որ նրա շնորհիվ, անթերի մայրենիով պատմում, երգում, արտասանում են: Մանկական անմիջականությամբ նրանց կողմից կատարված ժողովրդական պարն ու երգը, կարծես, սովորականից քաղցրահունչ էր: Փոքրիկներին ջերմ ծափերով վարձատրեցին միջոցառ-

մանը ներկա հյուրերն ու ծնողները: Իսկ ավարտին, Էմմա Արղուլյան ուսուցչուհուն, սերունդների դաստիարակության սուրբ գործին ներդրած իր վաստակի համար, շնորհակալության, բարեմաղթանքի ու երախտիքի խոսքեր հղեցին Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու սարկավազ Գեւորգ Անտոնյանը, դպրոցի տնօրեն Իրինա ժամկոչյանը, ուսմասվար Ալմարի Սիրադեղյանը, ծնող Աննա Դարբինյանը, ուրիշներ:

ԳՅՈՒՆՆԱՐԱ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ
Թիվ 104 դպրոցի ուսուցչուհի

4 սեջոն 4 խաղարկութոն

ԲՅՅՈՒ ՄՅՅՆՈՆ ԶՃՃՅՈՒ
www.card.psp.ge
ԸՆՂԱՄԵՆԸ
12
ՄԵՔԵՆԱ
PSP №1

ԹՉ ԾՕ - ձ 2 ի 2 ռ Է 2 Ս 2 ՍԷ 2 1/2 Ս Է ձ Ծ Ծ ձ Ծ Ծ Ս Ծ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆՆՆԴՈՒՆԵԼԻ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ԱՐԸ ՄԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ

Վերջերս հողերս սկսել են ցավել: Ասում են՝ աղեր են կուտակվել: Սակայն աղի օգտագործումը երբեք չեմ չարաչափել: Ընդհանրապես կուզենայի իմանալ, ի՞նչ նշանակություն ունի աղը կյանքի համար:



Ե.Մինասյան

Մասնուկ

Ամենից առաջ աղն օգնում է, որ կալիումը մղվի բջիջ մեջ, իսկ բջիջը էլ նատրիումը մղվի դեպի արտաբջջային միջավայր: Այդ մեխանիզմը գործնականում անհրաժեշտ է օրգանիզմում ընթացող բոլոր գործառնությունների իրականացման համար: Մարդուն օրական անհրաժեշտ է 10-15 գրամ աղ: Մոտավորապես 7 գրամը մենք ստանում ենք բանջարեղենի, հացամթերքի, ձկան միջոցով: Մնացած 3-8 գրամը ստանում ենք ուտելիքի վրա աղ ցանելու միջոցով: Աղի սահմանափակումը, հատկապես շոգ եղանակին, կարող է ջրագրկման հանգեցնել: Միեւնույն ժամանակ աղի մեջ եղած քլորն անհրաժեշտ է ստամոքսախյուսի նորմալ արտազատման համար: Իզոլոր չէին նախկինում աղը համեմատում ոսկու հետ:

Մարդիկ հինուց օգտագործել են քարաղ կամ ծովի ջրից ստացված աղ, ինչպես թարմ կերակուր-

ների, այնպես էլ պահածոների պատրաստման համար: Քարաղի եւ ծովային աղերի ծագումը, ըստ էության, նույնն է, քարաղը հանքային միացություն է, որն առաջանում է դարավոր օվկիանոսների չորացման հետևանքով, իսկ ծովային աղը նույն հանքային միացությունն է, որն այսօր ստացվում է արհեստականորեն: Ցավոք, բնական աղի գտնվածքները կայիս մեթոդները պատրաստի մթերքը կերակրի աղը, գրկում են օգտակար տարրերից:

Այն երկրներում, որտեղ կերակուր պատրաստելիս օգտագործում են հին մեթոդով՝ արեւի տակ ծովի ջրի գոլորշացումից ստացվող աղ (Իսպանիա, Վենեսուելա, ճապոնիա եւ այլն), մարդիկ հազվադեպ են տառապում ինֆարկտից, սկլերոզից, քաղցկեղից, արյունատար եւ լիմֆային համակարգերի եւ այլ հիվանդություններից:

Բոլոր ընտանիքներին էլ քաջ ծանոթ իրավիճակ է, երբ փոքրիկը նոր է սկսում խոսել, բայց արդեն օգտագործում է այնպիսի բառեր, որոնք անընդունելի են: Ծնողներն սկսում են անհանգստանալ, թե երեխան մնա բառեր որտեղի՞ց է սովորել՝ չէ՞ որ իրենց ընտանիքում այդպիսի բառեր ոչ ոք չի օգտագործում: Նրանց չարաչափ անհանգստացնում է նաեւ այն, թե ինչպե՞ս վարվեն երեխայի հետ:

Արդեն 3 տարեկանում երեխայի բառաաշարը կազմում է 200-450 բառ: Եվ դրանց կողքին հանդիպում են այդքան ոչ ցանկալի բառերը: Որքան էլ ցավալի լինի, երեխան այդ բառերն օգտագործում է գիտակցելով: Եվ հիմնականում նա դա անում է շրջապատին հակառակվելու նպատակով: Այստեղ կարելի է ասել՝ նա աշխատում է հանդիսատեսի համար: Նրան շատ է հետաքրքրում, թե շրջապատն ինչպիսի վերաբերմունք ցույց կտա: Երեխան երբեմն փորձում է հասկանալ այն սահմանները, որից հետո չի կարելի դրանք կիրառել: Սա երեխայի համար մի շատ լավ առիթ է, որպեսզի գրավի շրջապատի ուշադրությունը եւ ինքնահաստատվի: Եվ հիարկե՞ միաժամանակ ստուգում է ծնողների ճկունությունը:

Այժմ փորձենք հասկանալ, թե այդ ամենը ինչպե՞ս կարող է օգտակար լինել ընտանիքի համար: Այստեղ կարելի է ասել՝ նա աշխատում է հանդիսատեսի համար: Նրան շատ է հետաքրքրում, թե շրջապատն ինչպիսի վերաբերմունք ցույց կտա: Երեխան երբեմն փորձում է հասկանալ այն սահմանները, որից հետո չի կարելի դրանք կիրառել: Սա երեխայի համար մի շատ լավ առիթ է, որպեսզի գրավի շրջապատի ուշադրությունը եւ ինքնահաստատվի: Եվ հիարկե՞ միաժամանակ ստուգում է ծնողների ճկունությունը:

Այժմ փորձենք հասկանալ, թե այդ ամենը ինչպե՞ս կարող է օգտակար լինել ընտանիքի համար:



Երեխան փորձում է հասկանալ սահմանները:

ապա այս ժամանակ անտարբեր մնալ եւ ոչինչ չասել չի լինի: Մինչ երեխային պատժելը լավ կլինի այնպես անել, որ երեխայի համար հստակ դառնա, թե որոնք են խիստ անընդունելի եւ կոպիտ բառերը, եւ որոնք ենք բոլորս օգտագործում միջավայրը ճանաչելու համար: Եթե ժամանակին չարձագանքենք շատ կոպիտ բառեր կարող են դառնալ նրա ագրեսիվ վարքի անբաժանելի մասերը: Երեխային ծանոթ չէ այդ բառերի իմաստը, սակայն շատ փոքրերն էլ շատ շուտ սկսում են հասկանալ, որ դրանք մեծ ազդեցություն ունեն մարդկանց վրա: Այս դեպքերում շատ կարեւոր է երեխային հասկացնել, որ մնա բառեր չի կարելի օգտագործել, քանի որ դրանք կարող են մարդուն վիրավորել ավելի ուժեղ, քան բռնաբանումը:

Չի բացառվում, որ այդ բառերը երեխան լսում է մեծ եղբորից, ընտանիքի մյուս մեծ անդամներից: Եթե մնա իրավիճակում երեխան երեկա է եղել, ապա բացատրեք, որ մեծերին երբեմն կարելի է մնա բառեր օգտագործել, սակայն դա սխալ է, մեծն էլ է երբեմն սխալվում, ասացեք, որ մեղավոր եք եւ այդպես արտահայտվել չի կարելի:

Այստեղ շատ կարեւոր է, որ դուք մեծամիտ դիրք չբռնեք. «Ինձ կարելի է այդպես վարվել, քանի որ ես մեծ եմ»: Չէ՞ որ երեխան էլ մի օր մեծանալու է: Ավելի լավ է ասեք. «Ես էլ ճիշտ չվարվեցի, այդպես խոսել չի կարելի», կամ «Ես բարկացած էի, այդ պատճառով այդպես արտահայտվեցի»:

Բոլոր դեպքերում, որքան էլ դժվար լինի, ամենաճիշտ տարբերակն է, եթե ծնողները փորձեն երեխայի մոտ ընդհանրապես չօգտագործել մնա բառեր: Ծնողների մոտ մոտեցումը կնպաստի, որ երեխան իր զարգացման այս փուլը ավելի սահուն անցնի:

2 ԾՕՂ 1 ձ Ծ

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԶՐԱՅԵՂՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ



Սկսվում են արչակուրդները եւ որոշել են այս անգամ հանգստանալ ծովափին: Գույե խորհուրդ տաք՝ ինչպե՞ս կարելի է օգնել խեղդվողին:

Բոլնիսի

Ա.Գեւորգյան

Ջրախեղդ եղածին սկզբնական շրջանում հնարավոր է վերականգնումը: Չի կարելի հուսահատվել եւ գլուխը կորցնել: Պետք է ճիշտ գործել:

Շնչառական կենտրոնի կաթվածահարումը վրա է հասնում խեղդվելուց 4-5 րոպե հետո, սրտի գործունեությունը պահպանվում է 15 րոպե: Շնչառական կենտրոնի կաթվածահարումը դեռեւս չի նշանակում, որ ուղեղի բջիջները մահացել են: Խեղդվածի մաշկը գունատ է լինում (շնչառական ուղիներում եւ թոքերում ջուր չի լինում) կամ կապտագույն (բերանից եւ թոքի փրփուտ հեղուկ է հոսում):

Պետք է հնարավորին չափ արագ մաքրել բերանը, ըմպանը, քիթը: Չեռացնել թոքերի ջուրը. մի ծնկան վրա հենվելով՝ մյուսի միջոցով տուժածին այնպիսի դիրք տալ, որ գլուխը կախվի ցած, եւ մի քանի անգամ մեջքի վրա ճնշում գործադրել: Տուժածին արագ դեմքով դեպի վեր շրջել. «բերանից բերան» կամ «բերանից քիթ» եղանակով արհեստական շնչառություն տալ եւ կատարել սրտի փակ մեթոդը: Չազուտը հանել, վերջույթները լավ շփել՝ արյան շրջանառությունը վերականգնելու համար: Միաժամանակ պետք է նրան տաքացնել՝ ծածկելով տաք հագուստով:

ՄԱՍԵՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒԲԳ ՊԱՆԻՐ. ԳԵՂԵՅԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Այս կաթնամթերքի առողջարար հատկությունների մասին նույնիսկ առասպելներ կան: Օրինակ, Ասորեստանի թագուհի Շամիրամն իր գեղեցկությանը եւ ուժով աչքի էր ընկնում շնորհիվ այն բանի, որ մանկության տարիներին բացառապես պանրով էր սնվել, որը նրան թռչուններն էին բերում իրենց կտուցներով: Պանիրը կաթից «վերցնում» է ամենաօգտակար նյութերը, եւ դրանք իր մեջ պահում խտացված ձեռով: Այն հարուստ է սպիտակուցներով եւ հանքային աղերով, որոնք հատկապես կարեւոր են երեխաների, պատանիների, հղի կանանց եւ կերակրող մայրերի համար: Պանիր խորհուրդ է տրվում ուտել տուբերկուլյոզով հիվանդներին, ինչպես նաեւ կոտրվածքներ ունեցողներին:



Սակայն սննդաբանները հիպերտոնիայով տառապողներին, ստամոքսի, մասնավորապես, խոցային հիվանդություններ ունեցողներին խորհուրդ չեն տալիս սուր համեմված եւ մեծ քանակով պանիր ուտել: Այնուամենայնիվ, օգուտն ավելի շատ է: Այն բարերար ազդեցություն ունի տեսողության, մաշկի վիճակի, նյութափոխանակության, աճի կարգավորման վրա:

Մեծանալու փուլ

Անընդունելի բառերը կարելի է բաժանել 2 խմբի: Առաջինը՝ անմեղ չարածիժություն, երկրորդը՝ արդեն սահմանված արգելք: Առաջին շարքում են այն բառերը, որոնք կազմում են երեխայի ամենօրյա բառապաշարը եւ օգտագործվում են ամեն օր: Երեխան հաճույք է ստանում այդ բառերն օգտագործելուց եւ այդ ամենի վրա ծիծաղելուց:

Որքան ծնողները քիչ ուշադրություն դարձնեն երեխայի կողմից կիրառվող այդ բառերի վրա, այնքան երեխան ավելի շուտ կդարձնի դրանք օգտագործել, քանի

տիճանաբար կդադարի դրանք գործածել, քանի որ կհասկանա, որ չի հաջողվում ծնողներին մանիպուլյացիայի ենթարկել: Այդ ժամանակ ծնողները կարող են փոքրիկին ասել. «Լավ, ես դա արդեն լսել եմ, կարող ես էլ չկրկնել»: Պետք է նաեւ երեխային պարբերաբար հիշեցնել, որ վատ բառերը պետք է ասել ուրիշների ներկայությամբ: Որքան քիչ դուք արձագանքեք երեխայի բառերին, այնքան նա ավելի շուտ այդ ամենը կմոռանա:

Խստիվ արգելել

Եթե երեխան սկսում է կիրառել ցենզուրայից դուրս բառեր,

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

Մայրը միշտ մայր է, որդիք են տարբեր:

ՊԱՐՈՒՅՐ ՄԵՎԱԿ (1924-1971)

Չայ գրող, բանաստեղծ, բանասեր

Գիտությունը ամեն բանի համ է տալիս՝ աղ է ասես:

ՊՎԻԹ ԳՈՒՐԱՄԻՇՎԻԼԻ (1705-1791)

Վրաց բանաստեղծ

Եթե խնդիրը կարելի է լուծել փողով, ապա դա խնդիր չէ, այլ՝ ծախսեր:

Չրեական ասացվածք

Իմաստունն իր համար ընտրում է ուրախ եւ դյուրահամոզ բարեկամի:

ԷՊԻԿՈՒՐԻ ՄՏՔԵՐԻՑ (մ.թ.ա.341-մ.թ.ա.270)

Հռոմեացի փիլիսոփա

Միավելել կարելի է տարբեր կերպ, ճիշտ վարվել կարելի է միայն մեկ ուղիով, այդ պատճառով էլ առաջինը հեշտ է, իսկ երկրորդը՝ դժվար, վրիպելը հեշտ է, նպատակին խփելը՝ դժվար:

ԱՐԻՍՏՈՏԵԼ (մ.թ.ա.384-մ.թ.ա.322)

Հռոմեացի փիլիսոփա

Հարեցողությունը երեխաների թուլության եւ հիվանդության պատճառն է:

ՀԻՊՈԿՐԱՏ (մ.թ.ա.460-մ.թ.ա.356)

Հնադարյան հույն բժիշկ

Կապիտալը մեռյալ աշխատանք է, որը, ինչպես հոգեգեշ, վերականգնանում է միայն այն ժամանակ, երբ ներծծում է կենդանի աշխատանք ու այնքան ավելի լրիվ է ապրում, որքան շատ կենդանի աշխատանք է կլանում:



ԿԱՐԼ ՄԱՐԻՍ (1818-1883)

Գերմանացի փիլիսոփա

Նա, ով ուզում է, ամուսն է ավելի շատ, քան նա, ով կարողանում է:

Ա.ԱՎԱԳՅԱՆ «Վրաստանի» ընթերցող

2 Ս Ծ Ի Զ Ի Ս Ծ

րոշման մեջ գրված է ԱԳ: Այդ երկու տառերը ի՞նչ են նշանակում:

- Քո բախտը դեռ բերում է: Իմ կինը օրացույցին է նայում:

* - Բժիշկ, ճիշտն ասեք, այն, որ ճողվածք եմ ստացել, դա է՞լ է ավրոնիլի հետեւանք:

- Հնարավոր է: Կարծում եմ՝ դատարկ շշերը խանութի համեմելիս չափաց պակի եք ծանրություն կրել:

* - Բժիշկ, իմ ախտորոշման մեջ գրված է ԱԳ: Այդ երկու տառերը ի՞նչ են նշանակում:

- Նշանակում է «Սատանան գիտի»:

* Ասիստենտը՝ բժշկին.

- Բժիշկ, երկրորդ հիվանդանոցի հիվանդն իրեն շատ վատ է զգում:

- Պետք է ասել՝ «հիվանդը կարծում է, որ իր ինքնագագողությունը փյուռ է»: Այդպիսի մոտեցումն ավելի ճիշտ է համարվում:

* - Բժիշկ, իմ ախտորոշման մեջ գրված է ԱԳ: Այդ երկու տառերը ի՞նչ են նշանակում:

Հաջորդ օրը ասիստենտը նորից դիմում է բժշկին.

- Բժիշկ, երկրորդ հիվանդասենյակի հիվանդը կարծում է, որ ինքը մահացել է:

* - Բժիշկ, դուք խնդրեցիք լեզուս ցույց տալ, բայց նույնիսկ չնայեցիք դրան:

- Ներեցեք, ես պարզապես ցանկանում էի հանգիստ մթնոլորտում դեղատոմսը գրել:

* Բժիշկը դիմում է իր

համախորհիմ, ով տառապում է ավելորդ քաշից.

- Եթե դուք ամեն օր քայլեք 10 կիլոմետր, ապա մեկ տարի հետո ձեր մարմնի կառուցվածքը կնորմալանա:

Մեկ տարի անց հաճախորդը զանգահարում է բժշկին.

- Բժիշկ, հիանալի է, ես գցել եմ ավելորդ կիլոգրամները: Բայց ինձ մոտ հիմա էլ այլ խնդիր է ծագել:

- Ինչպիսի՞:

- Ես տնից 3650 կիլոմետր հեռու եմ:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՐՈՒՍԱԳԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԷՍԻ

Հունիսի 23-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը ընդունել է Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տեր Լուրիան արքեպիսկոպոս Սա- նուկյանին:



Սերժ Սարգսյանը ընդունել է Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տեր Լուրիան արքեպիսկոպոս Սանուկյանին:

Հանդիպմանը Հայաստանի նախագահը եւ Ամենապատիվ Պատրիարքը զրուցեցին ազգային-եկեղեցական հարցերի, Հայաստանի եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև հաստատված սերտ համագործակցության, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության գործունեության, ինչպես նաեւ աշխարհասփյուռ հայ ժողովրդի կյանքում Հայոց եկեղեցու դերի եւ նշանակության հարցերի շուրջ:

Սուրբ հոգում բազմադարյա պատմություն եւ հարուստ ավանդույթ ունեցող Երուսաղեմի Եկեղեցու-տական Աթոռի գործունեությունը հայոց հոգեւոր եւ մշակութային ժառանգությունը պահպանելու եւ այն գալիք սերունդներին փոխանցելու գործում: Նախագահը վստահեցրեց, որ Հայաստանը պատրաստ է ըստ անհրաժեշտության աջակցություն ցուցաբերելու Երուսաղեմի Հայոց Պատ-

ՌԴ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հունիսի 23-ին պաշտոնական այցով Երեւանում էր գտնվում Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը: Այցի շրջանակներում ՌԴ ԱԳ նախարարին ընդունեցին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը:



Սերգեյ Լավրովը Հայաստանի նախագահին տեղեկացրեց իր այցի շրջանակներում Հայաստանի արտգործնախարարի հետ, երկու երկրների արտաքին գերատեսչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած բանակցությունների մասին, որոնց ընթացքում,

միասին քննարկել են Եվրասիական տնտեսական ինտեգրացիային Հայաստանի միանալու գործընթացները: Բնականաբար, քննարկվել է դարաքաղյան կարգավորման խնդիրը, որտեղ, ՌԴ-ն, ըստ Սերգեյ Լավրովի, հավատարիմ է այն սկզբունքներին, որոնք բազմիցս հաստատվել են երեք համաձայնագրերի կողմից:

Սերժ Սարգսյանը եւ ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը, հանգամանորեն քննարկել են բոլոր ուղղություններով հայ-ռուսական բարձր մակարդակի պայմանավորվածությունների կատարման ընթացքը, նախանշել երկկողմ եւ բազմակողմ փոխգործակցության ամրապնդման ուղղված հետագա անելիքները:

Սերգեյ Լավրովը Հայաստանի նախագահին տեղեկացրեց իր այցի շրջանակներում Հայաստանի արտգործնախարարի հետ, երկու երկրների արտաքին գերատեսչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած բանակցությունների մասին, որոնց ընթացքում,

բարձր մակարդակի պայմանավորվածությունների տեսանկյունից քննարկվել է հայ-ռուսական հարաբերությունների օրակարգի հարցերի ամբողջ համալիրը: ՌԴ արտգործնախարարը տեղեկացրել է նաեւ, որ հայ գործընկերոջ հետ այդ ամենի հետ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ

Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանն աշխատանքային այցով գտնվում է Արցախում: Այցի շրջանակներում Հայաստանի վարչապետի գլխավորած կառավարական պատվիրակությանն իր մտավայրում ընդունեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը:



Հանդիպումից հետո Հովիկ Աբրահամյանը եւ Բակո Սահակյանը շրջայց են կատարել մայրաքաղաք Ստեփանակերտում:

Հայաստանի կառավարության ղեկավարը նախ առանձնազրույց է ունեցել Արցախի նախագահի հետ, որին հաջորդել է ընդլայնված ձեռնարկով հանդիպումը Հայաստանի կառավարական պատվիրակության անդամների հետ:

Հայաստանի կառավարության ղեկավարը նախ առանձնազրույց է ունեցել Արցախի նախագահի հետ, որին հաջորդել է ընդլայնված ձեռնարկով հանդիպումը Հայաստանի կառավարական պատվիրակության անդամների հետ:

Հանդիպումից հետո Հովիկ Աբրահամյանը եւ Բակո Սահակյանը շրջայց են կատարել մայրաքաղաք Ստեփանակերտում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ 80 ՏԱՐԵԿԱՆ Է

Հայաստանի գրողների միությունն այս տարի կտոնի իր ստեղծման 80-րդ հոբելյանը: Հոբելյանի կապակցությամբ կկազմակերպվեն տարատեսակ տոնական միջոցառումներ, շնորհանդեսներ, հոբելյանական երեկո: Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը, միության հոբելյանին ընդառաջ՝ հունիսի 25-ին հրավիրված մամուլի ասուլիսի ընթացքում, նշեց, որ մայրաքաղաքում կտիրի տոնական մթնոլորտ:

Նման մի շարք գրքերի, հանդեսների շնորհանդեսներ: Քանի որ տարբեր գրողների ստեղծագործություններ են հրատարակվել արտասահմանում օտար լեզուներով, այդ գրքերը կներկայացվեն ընթերցողների դատին: Տոնական միջոցառումների զագաթնակետը կլինի հուլիսի 4-ին Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում անցկացվելիք հոբելյանական երեկոն, որի ընթացքում կինոն շնորհավորանքներ, եւ տարբեր գերատեսչություններ պարգևներ կհանձնեն մեր գրողներին: Միլիտոնյանի կարծիքով, տոնակատարություններն առիթ կծառայեն նաեւ խոսելու ժամանակակից գրականության, ինչպես նաեւ մշակութային ժառանգության մասին, քանի որ հոբելյանին իր մեջ միայն պարգևներ չի ներառում:

Նրա խոսքերով, հուլիսի 2-ին Հայաստանի գրողների միության շենքում կբացվեն միության անդամ գրող-գեղանկարիչների աշխատանքներն ամփոփող ցուցահանդեսները:

ՀԳՄ նախագահն ընդգծեց, որ հոբելյանի առթիվ տեղի կունենան անցանցաբանական հարցերի և հարաբերությունների օրակարգի հարցերի ամբողջ համալիրը:

ՏԱԽԱՏ ՎԱՐՂԱՊԵՏՅԱՆԸ ԲԼԻՑ ՊԱՐՏԻԱՅՈՒՄ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՆԵՑ ԱՆԽԱՐՀԻ ԶԵՄՊԻՈՆ ՄԱԳՆՈՒՄ ԿԱՐԼՍԵՆԻՆ



Եռօրյա այցով Հայաստանում էր գտնվում Շախմատի միջազգային ֆեդերացիայի (ՖԻԴԵ) վարկանիշային աղյուսակի թիվ 1 շախմատիստ, գրոսմայստեր, աշխարհի գործող չեմպիոն, նորվեգացի Մագնուս Կարլսենը (Նա աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճել է 2013 թվականին եւ օրեր առաջ աշխարհի չեմպիոն ճանաչվեց նաեւ արագ ու կայծակնային շախմատում):

Սարգսյանի, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրիել Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ: Բայց ամենաանսասցիոն իրադրությունը կայացավ, երբ այցի շրջանակներում շախմատի աշխարհի չեմպիոնը միաժամանակյա խաղի սեանս անցկացրեց հայ պատգամավորների հետ: Հայաստանի ԱԺ պատգամավոր, ծնունդով Վրաստանի Լինոնոմիդայի շրջանի Փոքր Գոնդուրա գյուղից Տաճատ Վարդապետյանը բլից պարտիայում պարտության մատնեց Մագնուս Կարլսենին: Մեկնաբանելով պատգամավորի հաղթանակը, ԱԺ մեկ այլ պատգամավոր Սամվել Ֆարմանյանն իր ֆեյսբուքի էջում նշեց. «Երեկ իմ կյանքի ամենահաճելի օրերից մեկն էր: Շախմատային երկու պարտիա խաղալու հնարավորություն էր ընձեռվել աշխարհի բացարձակ չեմպիոն Մագնուս Կարլսենի եւ իմաստուն խաղի հայ արքա Լեւոն Արոնյանի հետ: Սա ամոռանալի է... Բայց օրվա թագնուպսակը իմ գործընկեր Տաճատ Վարդապետյանի հաղթանակն էր նորվեգացի իրաշամանուկի նկատմամբ: Հայաստանը շախմատային գերտերություն է, որտեղ աշխարհի չեմպիոնը կարող է պարտվել անգամ պարզ պատգամավորին կամ բակույն շախմատ խաղացողին:

Այցի շրջանակներում Մագնուս Կարլսենը ու աշխարհի գավաթակիր, շախմատի համաշխարհային օլիմպիադայի եռակի հաղթող, Հայաստանի ընտրանու կազմում աշխարհի թիմային առաջնության չեմպիոն, գրոսմայստեր Լեւոն Արոնյանը հանդիպումներ ունեցան Հայաստանի նախագահ Սերժ

Սերժ Սարգսյանը ընդունել է Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տեր Լուրիան արքեպիսկոպոս Սանուկյանին:

ՀԱՆԳՐՈՒՄ ԲՐՅՈՒՄԵՆՈՒՄ

Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը կարճատև զրույց է ունեցել ԱՄՆ պետքարտուղար Ջոն Բերրիի հետ: Նրանք շփվել են ՆԱՏՕ-ի կողմից կառավարվող Անվտանգության աջակցության միջազգային ուժերի (ISAF) նախարարական հավաքի ընթացքում Բրյուսելում ՆԱՏՕ-ի կենտրոնականում:

ISAF-ի արտաքին գործերի նախարարները հավաքվել են քննարկելու Անվտանգության աջակցության միջազգային ուժերի առաքելության առաջընթացն ու հետագա ծրագրերը:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ՝ ՍՆՆ-ՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՂԵՄՊԱՆ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով՝ Տիգրան Սարգսյանին շնորհվել է Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանի դիվանագիտական ասպիժան: Նախագահի մեկ այլ հրամանագրով՝ Տիգրան Սարգսյանը նշանակվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան: Նախագահի մեկ այլ հրամանագրով՝ Թաթուլ Մարգարյանն ազատվել է ԱՌՆ-ում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանի պարտականություններից:

ԲԱԶՄԱՏԵՆԵՐԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՍԵՐԱՅՎԵՑ

Ռուսաստանի Դաշնության խորհուրդը հունիսի 25-ին վավերացրել է 2013 թվականի հունիսին երեւանում ստորագրված Ռուսաստանի եւ Հայաստանի միջև ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին պայմանագիրը:

Ենթադրվում է, որ վավերացումից հետո պայմանագրի իրացման համապատասխան մեխանիզմը սահմանված կարգով կորոշվի ՌԴ նախագահի կողմից, ինչը թույլ կտա կարգավորել գործադիր իշխանության համերկրային մարմինների գործակցությունը ցանկերի չեւավորման, դրանց համաչափացման, հաստատման, մատակարարումների վերաբերյալ պարտավորագրերի կնքման, դրանց գրանցման եւ իրացման նկատմամբ վերահսկողության փուլերում:

ԻՍՊԱՆԱԿԱՆ ՆԱՎԱՐԱՅԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՇՐՋԱՆԻ ԽՈՐԻՐՈՂԱՐԱՆԸ ԽՈՆԻՍԻ 23-ԻՆ ՎԱՎԵՐԱԿՐԵԼ Է ՀԱՅՈՅ ԿԵՂԱՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՆԱՀՈՂ ԻՆՉԱԿԱԳԻՐԸ:

Իսպանիայի Նավարայի Ինքնավար Շրջանի խորհրդարանը հունիսի 23-ին վավերացրել է Հայոց Կեղասպանությունը ճանաչող Ինչակազմի կողմից Հայաստան եւ Լեռնային Ղարաբաղ կազմակերպված ուսուցողական այցելությունների արգասիքն է:

Նավարան Իսպանիայի իյուսիսում գտնվող եւ Ֆրանսիայի հետ սահմանակից ինքնավար շրջան է, որն իր չափերով գրեթե հավասար է Կիպրոսին (10.391քառ. կմ): Նավարայի բնակչության թիվը հասնում է 650 հազարի: Այն Իսպանիայի 4-րդ շրջանն է, որը ճանաչում է Հայոց Կեղասպանությունը՝ Բասկերի երկիր, Կատալոնիա շրջաններից եւ Բալեարիկ կղզիներից հետո:

ՀԱՎՈՐ ՊԱՐՈՒՅՄԵՆԻ ԳԻՐԸ՝ ԸՆԹԵՐՄԵՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՐԵՐԻ ԸՄՔՆՈՒՄ

Պոլսահայ դասական, երգիծաբան Հակոբ Պարոնյանի «Պոլսույս մը Պոլսո թաղերուն մեջ» գիրքն ընդգրկվել է Թուրքիայում ամառվա ընթացքում ընթերցողներին առաջարկվող լավագույն գրքերի ցանկում: Ցանկը կազմել է թուրքական «Հուրիեթ» թերթը՝ խորհուրդ տալով այն կարդալ ամառվա արձակուրդների ժամանակ:

Գրքի բովանդակության հակիրճ նկարագրության մեջ նշվում է, որ այն «լավագույն դեղամիջոց կարող է հանդիսանալ այն ընթերցողների համար, ովքեր որոշել են արձակուրդն անցկացնել Ստամբուլում»: «Պարոնյանը կօգնի, որպեսզի այլ աչքով նայեք քաղաքի անցյալին, որը կորցրել է իր գույները, ուրվագիծը, կերպարը, անգամ իր ժողովուրդների մեծ մասին»,- նշվում է գրքի ծանուցագրում: